ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

«25» հոկտեմբերի 2017 թ. N 2

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի N 1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2016 թվականի ապրիլի 18-ի N 109-Ա հրամանով հաստատված հավելվածի 34-րդ կետի 1-ին ենթակետը և Ավագ Հարությունյանի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել «Հայ գինեգործների միություն» իրավաբանական անձանց միության անդամությունը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի /այսուհետ՝ Խորհուրդ/ կազմում:

2. Ուժը կորցրած ճանաչել Խորհրդի նախագահի 2016 թվականի մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ դիմումները բավարարելու և մերժելու, խորհրդի անդամների առավելագույն թվաքանակը և անհատական կազմը հաստատելու մասին» N 1 որոշման 4-րդ կետով հաստատված N 3 հավելվածի 13-րդ կետը:

Ի. Առաքելյան